№№ 8—9 ՕԳՈՍՏՈՍ — ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ, №№ 8—9.

Ա. Բաժին

Որբ ծաղիկներ (պատկեր)։ Քասախի ափին (ոտանաւոր).—Ա. Ղ.։ Աշակերտական երգ (ոտանաւոր).—Վահ. Նիկողոսեան։ Գիշերային կեանք.—Յովհ. Կոստանեանց։ Չըհասկացան (ոտանաւոր).—Գէորգ քահ. Մկրտումեանց։ Ես սիրում եմ ամենքին — Լ. Մարկոսեան։ Ամենաերկար պատմութիւն.—Թարգմ. Գ. Բաբուրեանց։ Աղերս (ոտանաւոր).—Ա. Յ. Ասման։ Ծաղիկների մէջ (կըշարունակուի).—Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց։ Ընտանիքի միակ ծաղիկը (պատկեր)։ Նմուշներ.—Տէր-Ներսէս Նիկողոսեան։

Զ ւ ա ր ճ ա լ ի ք

Հանելուկներ։ Բացատրութիւններ։

Երկաթէ դռներ Դանիայի վրայ (պատկեր)։

Բ. Բաժին.

Չորս տեմպերամենտների համեմատութիւնը.—Ա. Չիլինգարեան։ Խաւարի եւ սառոյցների մէջ.—Ս. Պապեանց։

Յայտարարութիւններ։

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

յաւելուածով դաստիարակների համար

XVIII ՏԱՐԻ № 8 – 9 ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900 Թ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Կ. Մարտիրոսեանցի. ||| Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1900

Дозволено цензурою. Тифлисъ, 21-го сентября 1900 г.

Որբ ճուտիկներ

ՔԱՄԱԽԻ ԱՓԻՆ

Կապոյտ երկինքը, պարզ գիշեր է. աստղունք մեղմիկ կըփայլեն, հանդարտ կերպով պար բոլո-

բամ՝ անո՜ւշ ձայնով կերգեն…

Խո՜ր, ապառաժ ձորի միջից
ծեր Քասախը մենաւոր, աղ-
մկելով միշտ կռուում է ափե-
րի հետ ամեն օր…

Ա. Հ.

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԵՐԳ

—

Ամառն անցա՛ւ· անցան օրեր
Հանգստութեան մեր անհոգ,
Աշխատանքի մեզ սեպտեմբեր
Բերեց ժամեր բազմահոգ:

Դէ՛, շուտ առնենք մենք աշխոյժով
Դասագրքեր՝ սովորենք.
Ընկերական զուարթ երգով
Տաղտուկ ժամեր փարատենք:

Ուրախութեան կըգան նորից
Պայծառ օրեր յուսավառ,

Կըմոռանանք զրկանք, թախիծ
Բարի գործում օգտակար:

Վսեմ մտքեր մանուկ հոգում
Թո՛ղ արձակեն արմատներ,
Փոթորիկներ ապագայում
Չըխախտեն մեր հաւատ, սէր:

Սովորելու ազնիւ փափագ
Վառ է հոգու մեր եռանդ,
Խոչընդոտներ տանք ոտի տակ,
Յառաջ դիմենք անվկանդ:

Վահ. Նիկողոսեան



Գիշերային կեանք

I.

Լսում եմ ես ինչպէս զարթնեց թռչնիկը և յանկարծ երգեց գիշերուայ մէջ. Նրան ձայնակցեց մի ուրիշը — մեղմիկ ու մեղմիկ, յետոյ երրորդը, յետոյ չորրորդը... և շուտով մի հրաշալի ներդաշնակութիւն կազմուեց. ծաղիկները բացւում էին, թիթեռները թռչում... իսկ աստղերը ուշադիր էին այդ ներդաշնակութեան, — և այդ բոլորը գիշերուայ մէջ՝ երբ մարդը քնած է...

II.

Բնութիւնը եւ երեխան

Անձրևը կաթկաթում է... ցուրտ է և թաց... քամին երերացնում է ծառերը... Նրանք խըշ-

խշում են, գլուխները տանում են և բերում... կարծես բան են խնդրում, կարծես վիշտ ունեն և լալիս են...

Օրօրոցի մէջ երեխան լալիս է, մայրը ծիծ է տալիս, օրօրում է... նա կրկին է լալիս, գլուխը երերացնում է, նժնժում է... չի քնում, կարծես վիշտ ունի...

Ո՜րքան նման են բնութեան և երեխայի լացը...

III.

Մանուկն էլ բնութիւն է

Նրա աչքերը աստղերի նման փայլում էին. Նրանք նաշխուն էին, ինչպէս ծաղիկներ. Նրա ձայնը հնչում էր այն հրապոյրքով, որպէս անուշաբոյր զեփիւռը, իսկ հոգին հեզ էր, ինչպէս ջուր. այս բոլորը արտայայտւում էր մի խորհրդաւոր գաղտնիքով—երբ նա երգում էր... Մի՞թէ բնութիւնը այդպէս չէ՞...

Յովհ. Կոստանեանց

(Պուլաւայից)

ՉԸՀԱՍԿԱՑԱՆ

—

Ո՞ւր ես, մայրի՛կ, քեզ կարօտ եմ,
Հասի՛ր, մայրիկ, դարդոտ եմ.
Ես միայն եմ, ես օտար եմ,
Անկեղծ սէրի կարօտ եմ։

Դու ուսուցիր՝ Տիրոջ խաչը
Տանել սիրով, անտրտունջ.
Նրա համար մարտնչելու՝
Պատրաստ լինել անմռունչ։

Դու ուսուցիր տանջւած եղբօր
Սրբել արիւն-արտասուք.
Սէր տալ, ձեռք տալ յուսահատին,
Հաց տալ քաղցած — սովածին։

Պատւէր տւիր՝ ազնիւ լինել,
Հաւատարիմ—ընկերին.
Կեղծը, սուտը անվերջ ատել,
Ճշմարտութեան ծառայել:

Չըխոնարհւել կամապաշտին,
Խունկ՝ չըծխել արծաթին.
Պատիւ, անուն, գաղափարներ
Հացի համար չըծախել:

Բոլոր պատւէրդ ես պահեցի
Անձս, սիրտս տւեցի.
Եղբօրս համար գիշեր, ցերեկ
Ես անտրտունջ տանջւեցի:

Սակայն, մա՛յրիկ, ի՞նչ շահեցի.
—Ատելութիւն, հալածանք.
Չար մատնութիւն, դառը նախանձ,
Դաւող եղբօր թշնամանք:

Այժմ նստած՝ մտածում եմ
Մի՞թէ յանցանք գործեցի,
Սուրբ աւանդդ պահելով
Բոլոր սէրս բաժնեցի.

Ինքս մենակ, ատուած, օտար,
Խոցուած սրտով մնացի...

Ո՞ւր ես, մայրի՛կ, սէրդ եմ ուզում,
Հասի՛ր, մայրիկ, մեռնում եմ.
Ես միայն եմ, ես օտար եմ,
Անկեղծ սէրիդ կարօտ եմ։

Գէորգ Քահանայ Մկրտումեանց



ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՄԵՆՔԻՆ

—

Տասն տարեկան հասակումս ես մի խիստ չարաճճի տղայ էի.—այսպէս սկսեց իմ բարեկամ Վահանը իր զրոյցը:—Ինքս էլ չըգիտէի թէ ինչու, բայց ես ամենևին չէի կարողանում մի րոպէ հանգիստ մնալ: Հէնց որ ուսումնարանից տուն էի դառնում, իսկոյն շտապ-շտապ մի քիչ ճաշում էի և նորից դուրս վազում տնից դէպի փողոց, ինձ նման անհանգիստ ընկերներիս մօտ և այլ ևս նրանցից չէի բաժանւում, մինչև որ մութը բոլորովին պատում էր, երբ ես վերջապէս թողնում էի նրանց և յոգնած ու ջարդւած տուն վազում, մընացած չարութիւններս էլ տանը լրացնելու համար: Դրսում իմ ձեռքից օր չէին տեսնում իմ թոյլ փոքր ընկերներս, որոնց մօտից անցնելիս յանկարծ մի լաւ ապտակ մէկի երեսին էի հասցնում, միւսի ականջից քաշում, երրորդին յետևից հրում ու առւի մէջ ձգում և այլն, կամ խլում նրանց ձեռքից վէգերը, թոփը և ուրիշ խաղալիկները: Նրանք լալիս էին, գոռում, անիծում. իսկ ես ծիծաղում էի: Տանը նոյնպէս

ես ունէի իմ ստրուկներս. դրանք իմ փոքր եղբայրս, քոյրերս և մայրս էին։ Օր չէր լինում, որ ամեն մէկին մի քանի անգամ չըլացացնէի։ Նրանք բարկանում էին ինձ վրայ, գանգատւում հօրս և ես էլ շատ անգամ իմ արժանի պատիժս էի ստանում, բայց ամենևին չէի ուղղւում. ցաւից սիրտս վրէժով լցւում էր և հետևեալ օրը ես աւելի էի տանջում նրանց։

Միայն մեր տանեցիք և ընկերներս չէին, որոնց ես անտեղի չարչարում ու տանջում էի։ Փողոցով անցնող կովերը, էշերը, շները միշտ պիտի փայտի կամ քարի հարւածներ ըստանային ինձանից. մանաւանդ ես խիստ անողորմ էի դէպի կատուները, որոնց չափազանց ատում էի այն պատճառով, որ մի քանի անգամ վանդակից գողացել էին իմ բռնած թռչնիկներին։ Լաւ յիշեցի. իմ անմեղ զոհերիս թւումն էին և փոքրիկ թռչունները։ Ինձ նման չար ընկերներիս հետ մենք շաբունակ արշաւանքներ էինք կատարում դէպի այգիները և ծառերի վրայ որոնելով թռչունների բներ, մագլցում էինք դէպի վեր և ցած բերում շատ անգամ բոլորովին լերկ, անմազ ձագերին. իսկ եթէ ձագեր չէին լինում, մենք բարկանում էինք, քանդում բները և կոտրատում ձւերը։ Ամենևին մտքիցս չէ գնում մի դէպք։ Մի անգամ ես բարձրացայ մի շատ բարձր բարդու կատարը, բնից վերցնելու ալուալի ձագերին։ Գործս խիստ դժւար էր. շորերս արդէն բաւականին պատառոտել էին, ձեռքերս արիւնալւայ եղել։ Մեծ չարչարանքով հասնելով բնին, ես խիստ զայրացայ տեսնելով, որ ձագերը դեռ նոր էին ծածկւել աղւամազով. թևերի փետուրներն էլ խիստ կարճ էին։ Այլ ևս չըմտածելով, ես վերցրի երեք ձագերին էլ և բարձրից ցած նետեցի։ Ես տեսայ թէ ինչպէս խեղճերը մի քանի անգամ անշնորհք կերպով թափահարեցին իրանց կարճ թևերը և քարի նման գետնին դիպան։ Ծիծաղս եկաւ և ես բարձրաձայն կչկչացի։ Բայց շատ չըտևեց իմ ուրախութիւնս. յանկարծ գլխիս վրայ մի այնպիսի սուր հարւած ըստացայ, որ եթէ հաստ գդակս չըլինէր, ես անշուշտ արիւն-

շաղախ կըդառնայի. աչքերս մթնեցին և ես քիչ էր մնում վայր ընկնեի ծառի գագաթից։ Նրանից յետոյ նոյն սուր հարւածները սկսեցին թափւել ձեռքերիս ու բոբիկ ոտքերիս վրայ։ Ինձ պատժողները ագռաւներն էին, որոնք բոյնը դառնալով տեսել էին իմ արած անգութ գործը և իրանց ղռղռոցով հաւաքելով տասի չափ ուրիշներին՝ յարձակւում էին գործել ինձ վրայ։ Ես չըգիտէի ինչպէս պաշտպանւել. բարկացած թըռչունները քիչ էր մնում կտցահարէին իմ աչքերս, ես սարսափում էի նրանց ձայներից ու սկսեցի ամբողջ մարմնով դողալ։ Յետոյ երբ ես մեծ դժւարութեամբ ծառից ցած իջայ, տեսայ երեք փոքրիկ ագռաւներին անշարժ ընկած գետնի վրայ. նրանց բերանից արիւն էր հոսում. նրանք մեռել էին։ Այդ րոպէին ես առաջին անգամ խղճահարւեցի և անիծեցի ինձ, բայց մի քանի օրից յետոյ ես բոլորովին մոռացայ այդ բանը և սկսեցի առաջւայ պէս չարութիւններս շարունակել։

Տասնևհինգ տարեկան հասակումս ես արդէն որսորդ էի։ Հրացանը ուսս ձգած՝ ես չափում էի սարերն ու ձորերը։ Ամենևին չէր վրիպում իմ գնդակս և ես անխնայ սպանում էի պիտանի թէ անպէտք թռչուններին, և ամեն անգամ երբ պայթում էր հրացանս ու մի խեղճ թռչնիկ արիւնաթաթախ, վիրաւոր, մերձիմահ տագնապի մէջ դողում էր իմ ոտքիս առաջ ընկած, ես միշտ մի վայրենի հրճւանք էի զգում և ինքս ինձ հպարտանում, որ վարժ որսորդ եմ։ Շատ անգամ երբ ծնողներս ինձ յանդիմանում էին, որ ի զուր սպանում եմ անպէտք թռչնիկներին, ես արդարացնում էի ինձ նրանով, որ ուսուցիչը պատւիրել էր մեզ կազմել միջատների և փոքր թռչունների ժողովածուներ։ Եւ յիրաւի, իմ սենեակն զարդարւած էր թռչունների բազմաթիւ խըտւիլակներով, իսկ մի քանի արկղների մէջ քորոցների վրայ շարել էի ամեն տեսակ միջատներ—բզէզներ, ճանճեր, որդեր ու թիթեռներ։

Այդ ժամանակ յանկարծ մայրս հիւանդացաւ։ Գիտէ՞ս, ես մօրս ամենքից շատ էի սիրում. նա ինձ համար մենակ աւելի

թանկագին էր քան թէ մեր ընտանիքի միւս բոլոր անդամները։ Ճիշտ է, փոքր ժամանակս ես նրան ամենից աւելի էի վշտացնում, բայց և ամենից աւելի էլ նրան էի սիրում։ Նրա հիւանդութիւնը ինձ մեծ տխրութիւն էր պատճառում և ես շատ անգամ ամբողջ օրերով նրա անկողնի մօտից չէի հեռանում։

Մի օր էլ մեր պարտիզում բռնեցի մի փոքրիկ թիթեռ. շատ գեղեցիկն էր նա և ես խիստ ուրախ էի, որ աւելի հարստացաւ իմ ժողովածուն։ Ես նրան ևս քորոցով գամեցի տախտակի վրայ և ուզելով մօրս որևէ բանով զբաղեցնել, մօտեցայ նրա մահճակալին ու պարծանքով ցոյց տւի նրան իմ թանկագին գիւտս։ Վիրաւորւած թիթեռնիկը անհանգիստ թափահարում էր իր սիրուն թևերը, բայց ի զո՛ւր, ազատւել չէր կարող։

— Դու դեռ նոյն անգութ և չար տղան ես, - ասաց ինձ մայրս դողդոջուն ձայնով։ — Ինչ է արել քեզ այդ խեղճ անմեղ արարածը, որ նրան այդպէս տանջում ես։ Ինչու ես կեանքից զրկում դրան, չէ՞ որ դա ևս ապրել է ուզում։ Տեսնում ես, Աստւած էլ մեզ պատժում է այդպիսի չարութեանդ համար։

— Ես այլ ևս չե՛մ տանջիլ միջատներին, մայրիկ, և չեմ սպանիլ թռչուններին, եթէ դրա համար Աստւած բարկանում է մեզ վրայ. — ասացի ես նրան խղճահարւած և ամաչելով։ — Այո՛, ուխտում եմ այսուհետև ոչ միայն չըտանջել ու սպանել սրանց, այլ ընդհակառակն միշտ սիրել ու պաշտպանել. միայն, մայրիկ, աղաչում եմ շուտ առողջացիր։

Մայրս հոգոց հանեց։ Ես արագութեամբ դուրս քաշեցի քորոցը սիրուն թիթեռնիկի մարմնի միջից և նրա թևերից բռնելով, բարձր օդի մէջ ձգեցի, ազատութիւն տալով նրան։ Բայց ես արդէն սպանել էի խեղճին։ Նա մի քանի անգամ անզօր կերպով շարժեց թևերը և ընկաւ մօրս բարձի վրայ։

— Խե՜ղճ, նա մեռա՛ւ։ Դու սպանեցիր նրան, Վահա՛ն։ Տե՛ս, ես էլ կըմեռնեմ այդպէս. — ասաց մայրս և արտասւեց։

Ես էլ լաց եղայ և բռնելով մօրս նիհար ձեռքը, համբուրեցի։ Ես աղօթեցի Աստծուն առողջութիւն պարգևել մօրս ու խոստացայ այլ ևս չըտանջել ոչ մէկին։

Աստուած լսեց իմ աղօթքս. մայրիկս առողջացաւ և ես էլ ճշտութեամբ կատարեցի իմ խոստումս ու այլ ևս ոչ միայն չեմ տանջում միջատներին, թռչնիկներին, անլեզու կենդանիներին և թոյլ ընկերներիս, այլ ընդհակառակն, ես միշտ սիրում եմ նրանց և պաշտպանում, երբ մէկը ուզում է նրանց հարուածել կամ չարչարել։ Ես այժմ պաշտպանում եմ և օգնում թոյլ ու անզօր կենդանիներին և հիւանդ, աղքատ ու անօգնական մարդկանց։ **Այժմ ես անխտիր սիրում եմ ամենքին**։—Այսպէս վերջացրեց իմ ծանօթ Վահանը իր զրոյցը։

Լ. Մարկոսեան

ԱՄԵՆԱԵՐԿԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Արաբական հէքիաթ)

—



րևելքում ապրում էր մի թագաւոր։ Նա այնքան էր սիրում հէքիաթներ լսելը, որ ամբողջ օրեր միայն հէքիաթներ լըսելով էր անցկացնում։ Նրա բոլոր պալատականներն ամեն տեսակ չեղած բաներ էին հնարում և չէին էլ բեզարում ամբողջ օրեր նստելուց ու իրանց թագաւորին այդպիսի հէքիաթներ պատմելուց։

Բայց, վերջապէս, նրանց հնարած բոլոր պատմութիւններն էլ հատան. մինչդեռ Բօղդի-խանը նորանոր զրոյցներ էր պահանջում։

Այն ժամ յայտարարեց, ի գիտութիւն ընդհանրութեան, որ նա, ով կըհնարէ ամենաերկար պատմութիւնը, կըստանայ գահաժառանգ իշխանուհու ձեռքը։

Շատերն իրանց զրոյցները երկարաձգում էին մի շաբաթ, միւսները մի ամիս, կային և այնպիսիները, որոնց յաջողւում էր իրանց զրոյցները ձգձգել մի քանի ամիս, բայց վերջապէս նրանց երևակայութիւնը դադարում էր գործելուց, զրոյցը վերջանում էր և նրանք ստիպւած էին իրանց գլուխները կոճղի վրայ դնել։

Վերջապէս, եղաւ մէկը, որ յայտնեց թէ ինքը գիտէ մի ամենաերկար պատմութիւն և թագաւորին խնդրեց որ ողորմածութեամբ լսէ իր խօսածը։

Դա մի հանդիստ և հեռատես մարդ էր. Նախ քան իր պատմութիւնը կըսկսէր, նա ոլոշակի պայմանաւորւեց իր ըղ-

քաղմունքի ժամանակի և հանգստանալու, ուտելու և քնելու ազատ ժամերի վերաբերեալ։

Ապա սկսեց իր զրոյցը։

«Կար չըկար մի Թագաւոր, որ շատ ագահ էր, այնքան ագահ, որ պատրաստ էր իր հպատակների ամեն ինչը խլել, իրան սեպհականացնել։

Մտածեց խլել մինչև անգամ իր ամբողջ պետութեան մէջ բուսող հացը։ Նա հրամայեց մի սարի ծայրին մի ահագին ամբար կառուցանել, ուր և սկսեց ուղարկել դաշտերից հաւաքած բոլոր ցորենը, ապագայում այն աւելի Թանգ գնով վաճառելու համար։ Իր ամբարում հացահատիկներ այնքան շատ հաւաքեց մինչև որ վերջապէս բերանէբերան լցուեց։ Ապա հրամայեց ամուր փակել բոլոր դռները և պատուհանները։

Բանւորները պատահմամբ ամբարի հէնց գլխաւոր մուտքի մօտ բաց էին Թողել մի պստիկ ծակ։

Յանկարծ երևան է գալիս մկների մի ահագին քարւան, որ աշխատում էր միանգամից ներս պրծնել ամբարը, բայց ծակն այնքան փոքր էր, որ նրա մէջ կարող էր միայն մէկը մտնել. և ահա այդ մուկը մտաւ ամբարը և ծլկացրեց մի քանի հատիկ, նրանից յետոյ մտաւ միւս մուկը և նոյնպէս ծլկացրեց մի քանի հատիկ, նրանից յետոյ ներս պրծաւ էլի մի մուկ և նոյնպէս ծլկացրեց մի քանի հատիկ, նրանից յետոյ ներս պրծաւ էլի մի մուկ և Թռցրեց մի քանի հատիկ, սրանից յետոյ մտաւ էլի մի մուկ և գողացաւ մի քանի հատիկ»...

Եւ ահա այս կերպ՝ պատմողն իր զրոյցը շարունակում էր առաւօտից մինչև երեկոյ, նախաճաշիկից մինչև ճաշը, ճաշից մինչև ընԹրիքը, ամբողջ օրեր, շաբաԹներ, ամիսներ։

Թագաւորը համբերուԹեամբ լսում էր, բայց վերջապէս, չըդիմացաւ և ասաց.

—Դէ, հերիք է, մկների մասին իմացանք, հասկացանք. ընդունենք, որ նրանք հաւաքեցին այնքան հատիկ, որքան

իրանց բաւական էր. այժմ պատմիր, տեսնենք, ինչ եղաւ յետոյ:

—Ո՜հ, արքայ, ես ինչպէս կարող եմ պատմել յետոն, մինչև որ չըպատմեմ թէ ինչ եղաւ առաջ:

Եւ նա շարունակեց.

«Ահա ներս պրծաւ մի նոր մուկ և դուրս բերեց մի քանի հատիկ, նրանից յետոյ մտաւ միւսը և զողացաւ մի քանի հատիկ»...

Թագաւորը լսում էր անսպառելի համբերութեամբ ամբողջ վեց ամիս, բայց, վերջապէս բացականչեց.

—Օ՜ֆ, բարեկամ, ես քո մկներից միանգամայն բեզարեցի, երբ պէտք է վերջնականապէս ձեռք քաշես նրանցից:

—Օ՜, թագաւոր, ով կարող է այդ անել: Այդքան ժամանակամիջոցում մկները դատարկեցին ամբարի միմիայն մի փոքրիկ անկիւնը, մինչդեռ գալիս և իրար էին յաջորդում նորանոր մկներ: Եթէ ձերդ մեծութիւնը կունենայ այնքան համբերութիւն, որ լսէ իմ զրոյցը, ապա միայն, վերջ ի վերջոյ, կըկարողանանք հեռացնել նրանց մէջտեղից:

«Եւ ահա ներս պրծաւ էլի մի մուկ ու նորից զողացաւ մի քանի հատիկ»...

Վերջապէս, յողնատանջ եղած թագաւորն այլ ևս չըհամբերեց ու բացականչեց.

—Լռիր, վերջապէս: Վերցրու իմ տէրութիւնը, իմ դուստրը, իմ ամբողջ հարստութիւնը, միայն թէ, Աստծու սիրոյն, ազատիր ինձ քո այդ զզւելի մկներից:

Այդ օրւանից յետոյ տխմար թագաւորը դադարեց հէքիաթներ լսելուց:

Թարգմ. Գ. Բաքուրեանց

Ա Ղ Ե Ր Ս

Եթէ իրաւ է, որ մարդկան ազգին
Սպասում է մի ահեղ դատաստան,
Եւ թէ Գաբրիէլը փողըն ի ձեռին
Պիտի գոչէ ʻայս մարդկութիւնն յատեան
Որ Արարչին տար
Հաշիւ ու համար.

Ո՜հ, այն ժամանակ կուզէի լինել
Մի անմեղ հրեշտակ, որ կարենայի
Այն վեհ դահոյքի առաջ ծունկ չոքել,
Թողութիւն խնդրել մեր այս աշխարհի
Անթիւ անհամար
Մեղքերի համար.

Խնդրէի նորան, որ ներէր մարդկանց,
Զի չեն իմացել թէ ի՜նչ են գործել.
Կուզէի ներէր այս թզուկ մարդկանց,
Որ դորանով ցոյց տայ մի անգամ էլ
Մեծահոգութեան
Վեհ առհաւատչեան:

Ա. Ց. Ասման

ԷՄԻԼ ՏԷՐՕ

—

ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԷՋ

Ծերուկ այգեպանի պատմութիւնները

(Փոխադրած եւ յարմարեցրած հայ մանուկների համար)

ԱՆՁՐԵՒԻ ՈՐԴ

VI

Երկու շաբաթ անց գետակի մօտ եղած դատարկ տեղը ուրիշ կերպարանք ստացաւ. Նրա շուրջը Աննիկի հրամանաւ այժմ կանաչ չափար էր շինուած և մշակները փորում էին հողը, թախտեր ու լաքեր շինում, ճանապարհները կարմիր աւազով ու մանր քարերով ծածկում։

Աննիկը համբերութեամբ սպասում էր մինչև Յովակիմը կառողջանար և չէր ուզում առանց նրան ոչ մի բան սկսել։

«Իմ այգին շատ սիրուն է, միայն մէջը դեռ ծաղիկներ չըկան», մի անգամ ասաց իրան տիկնիկի հետ այնտեղ խա-

գալիս։ «Լաւ չի՞ լինի՜լ արդեօք որ այս դատարկ լաքում սպիտակ վարդ տնկեմ, որը իմ պատուհանումն է, առանց նրան էլ սենեակներում շատ ծաղիկներ կան։

Նա տուն վազեց և մի րոպէից վերադարձաւ գեղեցիկ թուփը ձեռին։ Զգուշութեամբ հանելով ծաղկամանից, թխակով սկսաւ փոս փորել, որ նրա մէջ բոյսը տնկէ։

Բայց հէնց որ արմատը խրեց նրա մէջ, ճղաւելով վեր թռաւ տեղից։

Փոսից դուրս եկաւ մի կարմրա-մոխրագոյն երկայն անձրևաճիճու։ Աննիկը սաստիկ վախենում էր բոլոր սողուններից և զզւանքով փախչում որդեր ու թրթուռներ տեսնելիս. Նա այժմ էլ սկսաւ փախչել ծառուղիով, կասես թշնամին ետևից ընկած լինէր։

—Այդ ո՞րտեղ ես վազում, հարցրեց Բարսեղը Արշակի հետ նրա դիմացը դուրս գալով։

Աննիկը կանգնեց և շնչասպառ բացականչեց. Ախ, հայրիկ, մի գնալ այնտեղ,—այնտեղ մի սարսափելի որդ կայ։

Արշակը մի երկու թռիչքով հասաւ փոսին։

—Ո՜հ, տես ինչից է վախեցել, անձրևաճիճուից. ո՜հ, կասես հազւագիւտ բան է, միթէ նա երկիւղալի է. դա լաւ է միայն ձկներին խաբելու համար բանեցնել, արհամարհանքով ասաց Արշակը։

«Ամօթ քեզ, Աննիկ, դու Արշակի չափ էլ չըգիտես, ինչ պիտի անէ քեզ անօգնական անձրևաճիճուն. Նա թունաւոր օձ չէ խոմ, ասաց հայրը դառնալով աղջկան։

Աննիկը իսկապէս ամաչեց, մանաւանդ երբ Արշակը ձեռքի մէջ առաւ որդը։

—Ճի՞շտ է, որ հողի ճիճու էլ են ասում դրան, հարցրեց Աննիկը որ իրան շփոթմունքը ծածկէ։

«Այո, աղջիկս այդ միևնոյն է, դրան ասում են անձրևի կամ հողի որդ։

—Իսկ ինչիցն է որ այսպէս ծալծլւում է, հարցրեց Արշակը, որի ափի մէջ որդը ոլորւում էր։

«Նրա համար որ մարմինը ամբողջապէս բաղկացած է օղակներից, որոնցով նա ինչպէս կամենայ, կարող է գալարւել ու ծալւել, պատասխանեց Բարսեղը։

—Նա ո՞րտեղ է ապրում, հարցրեց Աննիկը։

«Նա ապրում է գետնի խոր ու փոս տեղերում, որ ինքն է փորում իրան համար. դրա համար ծակում է գլխով հողը և երբ յոգնում է կամ հողը իրան արգելք լինում, սկսում է կուլ տալ…

—Նա հողը կո՞ւլ է տալիս։

«Այո՛, երեխայք, եթէ այդպէս չանէ, չի կարող իրան համար բուն շինել, որովհետև այն խորութիւնից, ուր ինքը սողալով մտել է, անկարող է աւելորդ հողը դուրս ձգել։ Երբ իր բնակարանը պատրաստ է, ծածկում է ծակը տերևներով կամ մանր քարերով, նայելով թէ որը դրանցից յարմար ու մօտ է փոխադրելու։ Անձրևաճճիճուները չոր հողում չեն կարող ապրել, նրանց պէտք է խոնաւ տեղ. դրա համար էլ ամառը, երբ հողը չորանում է, նրանք քաշւում են հողի խորքերը, փոխելով իրանց ուղղութիւնը երբեմն աջ, երբեմն ձախ մինչև որ մի խոնաւ տեղ են գտնում…

—Ի՞նչպէս է նա սողում, երբ նա ոտներ չունի, ընդմիջեց հօրը, Աննիկը։

«Ճիշտ է նա ոտներ չունի, բայց դրանց փոխարինում են աչքով աննկատելի տասնևվեց հատ բշտիկներ մազերով, որ ութ ութ հատ ընկած են նրա փորի երկու կողմը. ահա նրանց օգնութեամբ է, որ նա առաջ է գնում…

—Ա՜յ, տեսէք, ես նրան միջից կըկիսեմ և ամեն մի կտորը էլի կըշարժւի, ասաց Արշակը և ուզում էր այդ բանը անել։

«Չըհամարձակւես, շուտով դիր գետնին. ինչու պիտի այդպիսի հանդարտ ու անվնաս որդնին չարչարել, բղաւեց Բարսեղը։

—Միթէ նա ցաւ է զգում, հարցրեց Աննիկը։



Ընտանիքի միակ ծաղիկը

«Անկասկած։ Նրա շօշափելիքը մանաւանդ շատ զարգացած է, ա՜յ տեսէք. և Բարսեղը մի չոր խոտով մեղմիկ դիպաւ որդնին։ Հէնց որ այդ արեց, որդնը արագ արագ սկսեց գալարւել։ Տեսնո՞ւմ ես ինչպէս զգում է, երբ նրան դիպչում են։ Դրա այդ զգայնութեան համար նրա թշնամիները օգտւում են նրան իր բունից դուրս քաշելով։

—Դրան ի՞նչ թշնամիներ կարող են լինել, հարցրեց Աննիկը։

«Շատ թռչուններ ու գազաններ, որոնք մեծ քանակութեամբ փչացնում են դրանց։ Մանաւանդ դրանց ինչպէս համեղ կերակուր սիրում է մի փոքրիկ թռչուն։ Որպէս զի դրանց բնից հանէ, կտուցով ու ճանկերով թրխթրխկացնում է հողը, որի ձայնից խեղճը վախեցած դուրս է գալիս, տեսնէ ինչ է պատահել, բայց հէնց որ գլուխը բնից հանում է, այդ աւազակը իսկոյն բռնում է և շատ անմեղ կերպով մաքրազարդում։

—Խե՜ղճ, բացականչեց Աննիկը։

«Դրա հախն է, հապա ինչո՞ւ է տերևները ու արմատները ուտում. ասաց Արշակը։

—Ո՞րտեղ է դրա բերանը, հարցրեց Աննիկը։

«Մարմնի ետևի կողմում. Նրա վերի շրթունքը աւելի պինդ է և կռացած է ներքևինի վրայ, նա ծառայում է հողը փորելու։ Ահա տեսէք ինչպէս է այդ անում։

Որդնը արդարև սկսաւ գլխով փորել հողը, որպէս զի շուտով նրանց հետաքրքրող աչքից փախուստ տայ։

—Նա մեզ տեսնո՞ւմ է, հարցրին երեխայքը։

«Ո՛չ, նա աչքեր չունի։

—Լսո՞ւմ է։

«Նոյնպէս և ոչ, նա ականջներ չունի։

—Նշանակում է նա այնպէս չար չէ, էլ ինչո՞ւ եմ նրանից վախեցել, ասաց Աննիկը։

«Չար լինելով չէ, միայն վնասակար է. դրանք իրանց

համար բուն փորելիս, ցանւած սերմերը հանոտում են և բոյսերի արմատները կտրատում: Բարեբախտաբար դրանք շատ թշնամիներ ունեն. խլուրդները, ոզնին, գորտը և զանազան թռչուններ ուտում են դրանց այնպիսի քանակութեամբ, որ դու Արշակի հետ չես էլ կարող թւերով գրել:

—Ես չըգիտէի անձրևաճիճուն այդպիսի որդ է եղել, ինչպէս դուք պատմեցիք մեզ, ասաց Արշակը:

«Արշա՛կ, երբ հայրիկը կըպատմէ, դու միշտ լսելու ես», նրա ականջին փսփսաց Աննիկը:

VII

ԱՌՈՂՋԱՑՆՈՂԸ

—

Անցաւ մի շաբաթ ևս, բժիշկը թոյլ տւեց այգեպանին, որ տեղից վեր կենայ: Փայտի օգնութեամբ Աննիկի ու Արշակի հետ Յովակիմը առաջին անգամը սենեակից դուրս եկաւ:

Աննիկի ուրախութեան չափ չըկար, տեսնելով որ Յովակիմը դրսումն է. նա շարունակ խօսում էր և Արշակի հետ ծերունուն պատմում, թէ ինչպէս առանց նրան այգում ոչ մի բան չէ յաջողւում:

—Ախ, Տէր Աստւած, ինչքան ժանգալներ են բսել իմ հիւանդ ժամանակը. դրանք բոլորովին խեղդել են մանուշակը: Նայեցէք ինչպէս վայրի վարսակը ծածկել է բեզեդայի ածուն. պէտք է շուտով այս ամենը քաղհանել:

—Ի՞նչ է նշանակում քաղհանել, հարցրեց Աննիկը:

«Դու չըգիտես ի՞նչ է նշանակում քաղհանել, ծիծաղեց Արշակը:

«Աղջիկը կարմրեց, թէև նա առաջ էլ լսել էր այդ բառը, բայց չըգիտէր ինչ է նշանակում:

Յովակիմը խստութեամբ նայեց թոռանը, և դառնալով Աննիկին, քաղցրութեամբ ասաց.

«Քաղհանել, նշանակում է վատ խոտերը պոկել, հանել, որովհետև դրանք շատ վնասակար են ծաղիկներին, ինչու որ խլում են նրանց սնունդի մի մասը և արգելք են լինում որ արևն ու օդը նրանց ցողունի կամ բնի ներքևի մասին հասնեն։

Աննիկը զարմանքից մինչև անգամ բացաւ բերանը։

—Մի՞թէ կարելի է, որ մի բոյս միւսին արգելք լինի։

«Օրիորդ, այդ մասին իր ժամանակին ես կբացատրեմ. այսօր մի քիչ յոգնած եմ և ուզում եմ մեր ապագայ այգու հետ ծանօթանալ։ Տեսնենք որտեղ էք շինել ածուները, թըմբակները և ինչպէս էք շինել ճեմելիքները։

Աննիկը մեծ բաւականութեամբ տեսաւ որ ծերունին հաւան, էր ինչ որ առանց նրան կատարւել էր այգում։

—Ինչ կասէք, օրիորդ, եթէ ժամանակաւ մի փոքրիկ բանջարանոց էլ շինենք, հարցրեց ծերունին ժպտալով։

«Ինչքան դուրեկան կլինէր, եթէ իմ այգում բանջարեղէն էլ բուսնէր։

—Ի հարկէ, մանաւանդ երբ նրանից արգանակ կ'եփեն։

«Արգանա՛կ... ո՜հ, արգանակ ես չեմ սիրում, ես համարեա թէ չեմ ուտում. ասաց Աննիկը։

—Այն հասարակ արգանակ է, իսկ այս ձեր սեպհական բանջարեղէնով շինած, այդ բոլորովին ուրիշ բան է։

«Դու իրաւ ես ասում, Յովակիմ, այդպիսի արգանակ ճիշտ որ շատ համեղ կլինի, ուրախացաւ Աննիկը։

—Եթէ հայրիկդ համաձայնէր, կարելի էր ջերմոց էլ շինել, որտեղ կարելի էր աճեցնել տաք երկրների գեղեցիկ բոյսերը։

«Ա՜հ, ես անպատճառ կխնդրեմ հայրիկիս։ Գիտես, Յովակիմ, երբ իմ այգում ծաղիկներ բսնեն, մենք նրանց համար գեղեցիկ անուններ կընտրենք։

—Ինչո՞ւ. խօսքը կտրեց այգեպանը, ամեն մի բոյս ունի

իր որոշ անունը. այդ անուններն էլ պիտի տաք ձեր ծառերին ու ծաղիկներին։

«Ես անուն չըգիտեմ, ցած ձայնով ասաց Աննիկը։ Ես միայն գիտեմ մանուշակը, վարդը և եղևնին, ուրիշ ոչինչ։

—Այդ մեծ ցաւ չէ. դուք շուտով շատերի անունը կիմանաք. ահա, օրինակ՝ այդ մեծ մուգ-կարմիր ծաղիկները կոչւում են պիոնս, նրանց շարքով այն ճերմակ մէջը ոսկեգոյն թելերովը—շուշան, նրանց մօտ բսած է մեխակը։

«Իսկ այդ խայտաբղէտ ամանների ձևով բսածները ինչպէս են կոչւում։

—Դրանք կակաչներ են, պատասխանեց Արշակը պապի փոխարէն։

«Դու ինձ կըպատմե՞ս բոլոր ծաղիկների ու ծառերի պատմութիւնը, այնպէս չէ, հարցրեց Աննիկը։

—Այդ պատմութիւնը ասւում է բուսաբանութիւն կամ բոտանիկա, որը սովորեցնում է թէ ինչպէս են բոյսերը ապրում, սնընդւում, աճում և մեռնում, ինչպէս պէտք է պահել, խնամք տանել նրանց։ Բոյսը, ինչպէս և կենդանի արարածը պէտք ունի որոշ խնամատարութեան. նա պէտք է որոշ պայմանների մէջ ապրէ։

—Ո՜հ, այդ այնպէս հետաքրքրական աշխարհ է, որ արժէ մօտից ծանօթանալ դրա հետ, ասաց Յովակիմը վառւած։

—Սիրելի Յովակիմ, շուտով առողջացիր, ու ինձ սովորեցուր այն ամենը, ինչ որ ինքդ գիտես, ես էլ քեզանից պակաս չեմ սիրել ամեն մի բոյս, բացականչեց Աննիկը և պինդ սեղմեց ծերունու առողջ ձեռը։

VIII

ԳՈՐՏԸ

—

Գիշերը անձրևեց, բայց լուսաբացին երկինքը պարզւեց, բոյսերը ցամաքեցին, նրանց թարմութիւնը և հոտը փռւեց արևի տաք ճառագայթների մէջ։

Ծառերի բաց կանաչագոյն տերևների մէջ ճլվլում, երգում էին այգու թևաւոր բնակիչները, սպիտակ ակացիայից լսւում էր ոսկեփետրիկների երգի ձայնը, որ առաջին անգամ մեծ ջանքով փորձում էին իրանց ձայնը։ Երգիչը անդադար սխալւում էր միևնոյն ձայնանիշի վրայ, բայց առանց վրդովւելու միօրինակութիւնից, քաջութեամբ նորից կրկնում էր նոյնը։ Այգու հողը և ճանապարհները այդ վաղ ժամին դեռ խոնաւ էին և Աննիկը այգին գնալուց՝ ստիպւած էր կրկնակօշիկ հագնելու։

Գլխաւոր թմբակի մէջ տեղը կանգնած էր թէյի վարդի մի հրաշալի թուփ ամբողջովին կոկոններով ծածկւած։

Այդ գիշերը կոկոններից շատերը բացւել էին և հպարտ վարդեր դառած՝ փայլում էին գեղեցկութեամբ ու անուշ հոտ փռում շուրջը։

Աննիկը հիացմամբ վազեց թփի մօտ, բայց յանկարծ սարսափած յետ թռաւ։

Թմբակի մօտ խոնաւ աւազի վրայ նստել էր մի հրէշ, կարմրա-մոխրագոյն գլխով ու կլոր մեծ աչքերով։

Աննիկը վախեցած փախաւ և շնչասպառ մօտեցաւ այնտեղ բանող այգեպանին։

—Ա՜խ, Յովակիմ, արի, արի շուտով, այնտեղ իմ սիրած թփի մօտ մի ահռելի հրէշ է նստել. լաւ է որ ես փախայ ազատւեցի, նա անպատճառ ինձ վրայ կըյարձակւէր, ասաց Աննիկը ձայնը կտրած։

—Ո՞րտեղ էր, այդ ինչ հրէշ պիտի լինի, արի գնանք տեսնենք ինչ բան է, տուր ձեռդ, ծերունին հանգստացրեց Աննիկին։

Բայց Աննիկը ձեռը չըտւեց, նա վախով հետևեց ծերունուն նրա ետևում թագ կենալով։

—Տէր Աստւած, ես էլ ասեմ ինչ բան է, սա գորտ է, ծիծաղեց Յովակիմը, միթէ արժէ դրանից վախենալ։

«Մի՞թէ դա գորտ է, չէ որ դա չար կատաղի կենդանի է։

Նայիր նրա հաստ մարմնին, հաստ ու կարճ թաթերին, կարմիր աչքերին, ցեխի գույնով մորթուն. ֆո՛ւհ, ինչ զզվելի կենդանի է, բացականչեց Աննիկը։

—Ես չեմ վիճել նրա մասին, որ գորտը շատ անդուրեկան տեսք ունի, սիրելի օրիորդ, արտաքինը շատ անգամ խաբուսիկ է. անշուք հագուստի մեջ կարող է լավ հոգի ծածկված լինել։ Միևնույնը կարելի է ասել և գորտի համար. չընայելով նրա զզվելի արտաքինին, նա լավ ու օգտակար կենդանի է։

Այդ խոսքի վրայ գորտը բացավ իր մեծ բերանը և կուլ տվեց մի ճանճ թռչելիս։

«Գնա՛նք, նա մեզ էլ կըկծէ, դողդողալով ասաց Աննիկը։

—Նա չէ կարող մեզ կծել. առաջինը որ ատամներ չունի, նրա ոսկրացած ծնոտները ընդունակ են միայն միջատներին հուփ տալու և տափակացնելու, որոնցով նա կերակրւում է. երկրորդ, մեզ կծելու համար նա պէտք է որ բարձրանայ մինչև մեր ձեռը կամ հրեսը, բայց նրա թաթերը այնպէս են, որ միայն կարող է փոքրիկ ցատքտումներ անել. նրա շարժվածքը դանդաղ է, աւելի քսքսելով է գնում քան ցատքտելով, ջրային գորտերին հակառակ։

«Ուրեմն նա վտանգաւոր չէ՞, հարցրեց Աննիկը։

—Առաջ ասում էին, որ գորտը թունաւոր է և նրա թոյնը կարող է սպանել մարդուն, բայց այդ ճիշտ չէ։ Այն հեղուկը, որ նա դուրս է տալիս իրանից, շատ վատ հոտ ունի, բայց թունաւոր չէ, նա միայն ծառայում է իրանից աւելի զօրեղ թշնամիներից պաշտպանւելու համար…

«Ինչպէս խատտջիլը, որ շնորհիւ իր վատ հոտին, ազատւում է թշնամուց, ընդմիջեց Աննիկը. երեկ հայրիկս ցոյց տվեց ինձ ծառաստանում։

—Բոլորովին ճիշտ է. բնութիւնը շատ կենդանիների է տվել այդ ընդունակութիւնը։ Նրանց արձակած վատ հոտը փախցնում է իրանց թշնամիներին։

«Ո՞րտեղից է առաջանում այդ հոտը։

—Նրանց մարմնի զանազան մասերում գտնւում են փոքրիկ խուլեր կամ պարկեր, որոնք դուրս են տալիս այդ ժանդահոտ հեղուկը։

«Եւ միայն այդ է գորտի պաշտպանութեան միակ միջոցը, հարցրեց աղջիկը։

—Ոչ, գորտը ունի և ուրիշ միջոց, եթէ չէք վախենալ ես ձեզ ցոյց կըտամ։

Աննիկը թէև ներսից վախենում էր, բայց չըթողեց որ նկատեն, ու քաջութեամբ պատասխանեց.

—Ո՛չ, չեմ վախենում։

Այդ միջոցին ծերունին վերցրեց մի չոր փայտի կտոր և դիպաւ գորտին. հազիւ թէ կպաւ նրան, գորտը սկսաւ փքւել։

«Հա՜-հա՜-հա՜, ինչպէս ուռչում է, ծիծաղեց Աննիկը, կարծես այն գորտը լինի, որ ուզում էր եզան չափ մեծանալ։ Ես այդ սովորել եմ «Գորտը եւ եզը» առակի մէջ։

—Այո, նա ուռչում է այն գորտի պէս. պատասխանեց այգեպանը և գիտէք ինչու։ Նրա մորթու և մարմնի մէջ տեղը օդով լցւում է, որի շնորհիւ առաձգական բարձի պէս է դառնում կաշին և խփելուց ոչինչ չէ զգում։

«Ինչպէս այդ հետաքրքրական է, ասաց Աննիկը, բայց տես նա ուզում է արևից հեռանալ և չափարի տակի ծակը մտնէ։

Այդ խօսակիցների մօտ եկաւ իր բազկաթոռում նստած Հայկանուշը։

—Վա՜հ, բացականչեց նա, իր աղախնի հետ, ձեր առաջը գորտը կանգնել է և դուք նրան չէ՞ք սպանում։

Այգեպանը խստութեամբ նայեց փոքրիկ աղջիկների վրայ։

—Ի՞նչու սպանել այդ անօգնական ու օգտակար կենդանուն։

—Գիտէք որ գորտը փչացնում է խխունջներին, թրթուրներին, որդներին, ճիճուներին և այն ամեն միջատներին, որ

վնասում են մեր բոյսերին։ Նա մի ամսում ուտում է այնքան միջատներ, որ մենք միասին մի քանի տարում չէինք կարող հաւաքել։

«Ես այդ չըգիտէի, կարմրելով ասաց Հայկանուշը։

—Բա՛ս, իսկ ես այժմ շատ բան գիտեմ, հպարտութեամբ ասաց Աննիկը։

«Կարծում եմ մեզ էլ շուտով պիտի սովորեցնես, ծիծաղելով ասաց Հօրեղբայրը մօտենալով նրանց։

Ն. Ն. Մելիք-Շահնազարեանց

(Կրաարունակի)

ՆՄՈՒՇՆԵՐ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՒ ԲՈՅՍԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Կ ո կ ո ր դ ի լ ո ս

—



Անշուշտ լսած կըլինիք «կոկորդիլոսի արտասուք թափել» խօսքը: Ասեմ, թէ ինչպիսի դէպքում են գործ դնում, երբ թշնամին մէկի ցաւին կարեկցութիւն է ցոյց տալիս կեղծաւորաբար, ասում են «կոկորդիլոսի արտասուք է թափում»: Այդ պարբերութիւնը կոկորդիլոսի բնաւորութիւնից է դուրս բերած: Երբ որ կոկորդիլոսը որս անել է ուզում, թաքնւում է եղէգնուտների մէջ և երեխայի աղիողորմ լացի ձայն է հանում: Միամիտ մարդիկ կարծում են թէ երեխայ է ընկած, մօտ են գնում և գազանի ճանկն են ընկնում ու զոհւում: Գազանը վրայ է ընկնում ու կուլ տալիս մարդուն:

Կոկորդիլոսը պատկանում է սողունների դասին, նման է մեծ մողէսի, որին հայերէն գետի նհանգ են անւանում: Նրա բնակավայրը Եգիպտոսի միջից հոսող Նեղոս գետն է, թէև ուրիշ գետերի մէջ էլ կարող է պատահել, բայց այստեղ աւելի յաճախ է լինում: Կոկորդիլոսի մարմինը ծածկւած է հաստ

թեփերով։ Նա լինում է քսան-երեսուն ոտք երկարութեան։ Նրա բերանը բացւում է շատ լայն, վերին և վարի ծնօտները մի անգամից են շարժւում։ Վերին ծնօտում գտնւում են երեսունվեց, իսկ ստորինում երեսուն սուր ատամներ, որոնք մեծ են և ուժեղ։ Հրացանի գնդակը հազիւ կանցնի նրա հաստ թեփուկներից, բայց փորի կողմից նրան վիրաւորելն աւելի հեշտ է։ Թէպէտ սողուններն ունին սրտի երեք խորշեր՝ երկու նախախորշ և մի սրտախորշ, բայց կոկորդիլոսինը ընդհանուրից բացառութիւն է կազմում, որովհետև ունի կաթնասունի նման չորս խորշ՝ երկու նախախորշ և երկու սրտախորշ. գլուխն ստանում է մաքուր արիւն, այդ պատճառով նրա գլուխն աւելի է գործում, քան թէ միւս սողուններինը։ Ունենալով ստոծանի—փորի խորշը սրտից բաժանող միջնապատ, թէև անկատար, կոկորդիլոսի շնչառութիւնը և նոյն իսկ մարսողութիւնը կատարւում է աւելի արագ։ Պարզ է որ կոկորդիլոսը աւելի շատակեր է, քան ուրիշ սողունները և որովհետև մարմինը շատ մեծ է, նա իր քաղցն յագեցնում է մեծ կենդանիներով, այդ պատճառով նա շատ ագահ է։ Բայց ագահութիւնը քաղցելուց է. երբ որ նրան կշտացնում են, նա դառնում է ընտանի կենդանիներից մէկը։ Ման է գալիս դանդաղ և չի կարող գլուխը յետ դարձնել, որովհետև ոտքերը կարճ են և պարանոցի ողերի յաւելւածները խոշոր։ Ջրի մէջ կոկորդիլոսը վարժ լողում է այնտեղ քթածակերն ու ականջի թմբկաթաղանթը փակւում են առանձին փականքներով։

Կոկորդիլոսն ուտում է ձուկ, թռչուններ և գազաններ, որոնց ճանկւում է գետերի ափերին. բայց կենդանիները հեշտ են հասկանում նրա ափի վրայ լինելը իր մշկահոտ հեղուկից, որ արտաթորում է պոչի մօտից և վարի ծնօտի գեղձերից։ Էգերը փոս են փորում գետերի ափերին, լցնում են չոր տերևներով և այնտեղ ածում են 30—50 ձու, իւրաքանչիւրը սագի ձւի մեծութեան և հաստ կեղևով։ Բոլոր բունը ծածկւում են չոր տերևներով։ Դրանով էլ վերջանում է ծնողների խնամքը

ձագերի մասին։ Ինչ ասել կուզի, որ այդ բները շուտ են աւերում ջրաշները ու մկները։

Ահա մի նկարագրութիւն կոկորդիլոսի մասին.

«Վերջին անգամ որ գնացի որսի—գրում է մէկ որսորդ, գլխաւոր ջանքս եղաւ կոկորդիլոս սպանել, որ երկու տարուց աւելի գիւղին շատ վնասներ էր հասցնում՝ ձի, կով, ոչխար, երբեմն իսկ մարդիկ տանելով։ Լսելով որ գազանը մի ձի է կերել, գնացի նրան բռնելու իմ ծառաների հետ. գետի առաջը փակեցինք հաստ ուռկաններով և յարձակւեցինք գազանի վրայ մեր նիզակներով ու հրացաններով։ Քիչ ժամանակ յուսահատ կռւելուց յետոյ, յաջողւեց նրան մեր ուռկանը ձգելու, որ բռնւեց որոգայթի մէջ, դադրած ու վիրաւորւած հրացանների ու նիզակների հարւածից։ Այնուհետև նրան ցամաքը դուրս քաշելով վերջին հարւածը տւինք։ Գազանի հաստութիւնը տասն երեք ոտք է, երկարութիւնը՝ քսան, իսկ պոչը տասն և մէկ։ Գլխի միայն ծանրութիւնը հարիւր գրւանքայ էր։ Գրեթէ ամբողջ ձին դեռ ստամոքսի մէջ էր։ Ձիու սրունգները սմբակների հետ դուրս քաշեցինք»։

Տէր-Ներսէս Նիկողոսեան.



ԶՒԱՐՃԱԼԻՔ

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

Առաջ. Վ. Ք. (ժողովրդական)։

1) Այլալա, բէալալա,
Տար Հազ արա,
Էի կախ արա։

2) Մի պուճուր Թոնդիր,
Երկու Հաց, մի քերինջ։

3) Երաբը չոքեց,
Ասլանը նիկեց (վեր ելաւ)։

Առաջ. Մակիչի․

4) Չետեւեալ 22 տառից—2 վ. 3 ա. 4 ր. 2 ռ. դ. ջ. 2 ու, շ. մ. բ. 2 հ. ղ. ւ.—կազմել եօԹը (7) բառ, 1) ծաղիկ, 2) բոյն, 3) բոյս, 4) կեղտ, 5) գործիք, 6) ոսկոր, 7) ընտանի Թռչուն։ Իւրաքանչիւր բառի սկզբնատառը փոխելով ստանալ մի այլ 7 բառ, որոնց սկզբնատառերը կազմեն մի ծաղկի անուն։

«Աղբիւրի» № 7 (յուլիս) Գ. Բաբուրեանցի և Մանուկի առաջարկած հանելուկների լուծումը։

1)

ո	ւ	թ	թ	ռ	չ	ո	ւ	ն

3) Առաջին վանկը բառի
„Օգ“ է՝ կենդանու անուն.
Գտայ նաև միւսը՝ „Ճիկ“,
Ստացայ ամբողջը՝ „Օգճիկ“։

Երբ որ առաջին վանկի
Վերջին տառը փոխեցի՝
Եւ տեղը ղ գրեցի,
Օղճիկ“ բառը կարդացի:

Սիմ. Պապիեանց

Այս հանելուկները վճռել են Նունէ Քումթայիսեանց, պ. պ. Վ. Նահապետեանց, Ձւռտ, Խ. Ղազարեանց։

—

Թւաբանական խնդրի լուծումը

2) Նախ 20 վեդրանոցից կլցնեմ 9 վեդրանոցը և կդատարկեմ 17 վեդրանոցի մէջ, մէկ էլ կլցնեմ 9 վեդրանոցը, նորից կդատարկեմ 17 վեդրանոցի մէջ. 17 վեդրանոցը կլցւի, իսկ 9 վեդրանոցի մէջ մնայ մի վեդրօ գինի. ապա 17 վեդրանոցը կդատարկեմ 20 վեդրանոցի մէջ, նորից 17 վեդրանոցը կդատարկւի: 9 վեդրանոցի մէջ եղած մի վեդրօն կդատարկեմ 17 վեդրանոցի մէջ, նորից 9 վեդրանոցը կլցնեմ 20 վեդրանոցից և կդատարկեմ 17 վեդրանոցի մէջ, որը կլինի 10 վեդրօ, 10 վեդրօ էլ կմնայ 20 վեդրանոցի մէջ, որով երկու հաւասար մասերի բաժանած կլինեմ։

Վաղարշակ Նահապետեանց

Այս խնդիրը վճռել է նաև Վ. Ղ. Սազանդարեանց։

—

4)

	ա	մ	ե	
ն	փ	ո	ր	ձ
ա	ն	ք	ի	ն
մ	ի	մ	ի	խ
	ր	ա	տ	

Ամեն փորձանքին մի, մի խրատ։

Վճռեց Խ. Ղազարեանց



Երկաթէ դռներ Դունայի վրայ

ԱՂԲԻՒՐ

Բ. ԲԱԺԻՆ

Չորս տեմպերամենտների համեմատութիւնը

Այն ուսուցիչն, որը մելանխոլիկ տղայի հետ բիրտ, կոպիտ է վարւում, նա շատ երկար ժամանակ պիտի սպասի, որ իրան նորից յաջողւի աշակերտի սէրն ու վստահութիւնը կրկին ձեռք բերել։

Փոքրիկ խոլերիկը թշւառ և ցաւալի գործերի ժամանակ առանց յիշողութեան չէ։ Եթէ չորս զանազան տեմպերամենտի աշակերտներ ի նկատի ունենանք և ասենք թէ ծնողները կամ ուսուցիչը դրանց կատարած յանցանքի համար, ամենքին էլ հաւասար պատժի են ենթարկել՝ ահա այդ ժամանակ ամենից առաջ սանգւինիկը կըսկսէ սաստիկ լաց լինել. դարձեալ նա կըլինի, որ փոքր ինչ յետոյ նորից կըծիծաղի և ամեն ինչ կըմոռանայ։ Սանգւինիկի առոյգ ոգին զանազան առարկաներից հարիւրաւոր տպաւորութիւններ կըստանայ և եթէ այդ միջոցին նրան պատժեն՝ այդ պատժի, ցաւի զգացմունքները նոր ուրախ տպաւորութիւնների տակ շատ շուտով ճնշւում, անհետանում են։

Ֆլեգմատիկը պատժի ժամանակ մի առանձին զգայութիւն ցոյց չի տայ և յետոյ էլ այդ մասին շատ բան չի կարող պատմել։ Պատիժը մելանխոլիկին դարձնում է ծանր, գաղտնապահ և վախկոտ։ Ինչպէս ասացինք, ուսուցիչը նրա վստահութիւնը նորից ձեռք բերելու համար պէտք է շատ աշխատի այդ մասին։ Խոլերիկը պատիժը չի մոռանայ, նա հպարտանում է նրանով որ ինքը այդ անվախ և արհամարական կերպով է ըն-

պչունում և նրանից չի վախենում։ Խոլերիկ տղի հետ գործ ունեցող ծնողը կամ ուսուցիչը կրկնակի լրջութիւն և խոհեմութիւն է ունենալու։ Խոլերիկ տղան իրան պատժողին գըրգռում է և մի տեսակ ձևական կռիւ է սկսում նրանց մէջ, թէ ո՞ր մէկն առաջին անգամ պիտի յոգնի։

Մի-երկու խօսքով էլ իմանանք չորս տեմպերամենտների դէպի մուզիկան և երաժշտութիւնը ունեցած հակումները։

Սանգւինիկը իր բնութեան պահանջի համաձայն մուզիկա և երաժշտութիւն սիրում է. այնպէս որ համարեա նա իր բոլոր գործի ժամանակ ինքն իրան երգում կամ շւացնում է։ Փոքրիկ խոլերիկը թէև սիրով երգում և շւացնում է, բայց այդ սանգւինիկի չափ չէ։ Փոքրիկ մելանխոլիկը համարեա ինքը իր ձայնից խրտնում և իր վրայ ծիծաղում է, այդ պատճառով նա երբէք չի սիրում երգել։ Փոքրիկ Ֆլեգման երբ ստիպւած է լինում երգել, ահա այն ժամանակ միայն ընկերների հետ երգում է։ Ինչ երգեցողութեան ժամանակ աստցինք՝ համարեա նոյն տեսակ էլ վերաբերւում են դէպի մուզիկան։ Ինչպէս օրինակ՝ մելանխոլիկ և Ֆլեգմատիկ տղաները հազիւ հազ մուզիկայի մէջ չափաւոր յառաջադիմութիւն անեն. սրանց հակառակ խոլերիկը այդ բանի մէջ լաւ ընդունակութիւններով օժտւած է։ Չընայելով այս ամենին, բայց և այնպէս վերոյիշեալ երեք տեմպերամենտներն իրանց հակումներով, բնական կարքով և ձիրքով սանգւինիկի հետ չեն կարող համեմատւել. երաժշտութեան և մուզիկայի մէջ սրանք ամենից յաջող, ամենից յառաջադէմն ու տաղանդաւորն են։

Մենք շատ անգամ տեսել ենք այնպիսի տղաներ, որոնք իրանց շւշւոցով, սուլոցով, բերանները տերևների կտորներ դնելով այնպիսի ներդաշնակ, գեղեցիկ եղանակներ են գեղգեղում, որ մարդ միմիայն զարմանալ կարող է։ Բացի դրանից նրանք վարժ և շնորհալի կերպով անում են իրանց հասարակ տեղական գործիքները, փող, թմբուկ, շւի և այլն։ Այո, սրանք ընդունակ, շնորհքով տղաներ են, որոնցից միմիայն մասնա-

գէտ գեղարուեստագէտներ դուրս կըգան և նրանց մեծ մասն էլ սանգւինիկ տեմպերամենտի տղաներից են առաջ գալիս։ Գալով նրանց ձայների յատկութեանը, պէտք է նկատել, որ առհասարակ սանգւինիկները մաքուր, ներդաշնակ և փափուկ ձայներ ունեն, այնպէս որ շատ անգամ փորձերը ցոյց են տալիս, որ տենոր երգիչները սրանցից են լինում, իսկ բաս և բարիտոնը մեծ մասամբ խոլերիկ տեմպերամենտի տղաներից։ Եթէ ֆլեգմատիկը երգելու մի առանձին ընդունակութիւն էլ ունենայ, այնուամենայնիւ նա իրան նեղութիւն չի պատճառի սովորելու և չի էլ աշխատի։ Զուտ մելանխոլիկը նուրբ երգեցողութեան ականջ չունենալով՝ միշտ սխալ կերգէ։

Մեր ասած այս բոլոր տարբերութիւնները աւելի յաջող և լաւ կարող են դիտել ծնողները, ուսուցիչները, խնամակալները։ Երբ նրանք տղաների հետ երկար ժամանակ միասին լինեն, նրանց հետ սիրով վարուեն, ամեն բանով հետաքրքրուեն, ամեն մի շարժում և գործ չորս աչքով դիտեն, խաղի ժամանակ էլ նրանց շարժումներից, ձայնի ել և էջից իրանց տեմպերամենտի յատկութիւնները կընշմարուեն։ Ահա այս զէնքերով կարելի է նրանց բաւականին ճիշտ կերպով ճանաչել և բուն դաստիարակչական գործի համար օգտուել։ Ընդհանուր խաղի ժամանակ իւրաքանչիւր տղայ իր տեմպերամենտին համապատասխան դեր յանձն կառնէ։ Սանգւինիկը խաղի ուրախ, զւարճացնող մասերի մէջ կըմասնակցէ, խոլերիկը առաջնորդի, խաղերի տեսակներ որոշողի և նրանց հրամաններ, կանոններ տուողի։ Մելանխոլիկն ինքն իրան ուտում է, որ չի կարող նրանց հետ հաւասար առաջ գնալ, այլ միշտ յետ կընկնի։ Վերջապէս ֆլեգմատիկն էլ ընկերների խնդրանօք հազիւ հազ խաղին կըմասնակցէ և երբեմն էլ մինչև անգամ կըզւարճանայ։ Սանգւինիկը միշտ սիրում է ընկերութեան մէջ լինել և ուր այդ չըկայ, նա կ՚որոնէ և կըգտնի՝ որպէս զի ուրախանայ և նրանց հետ զւարճալի խօսակցութիւններ ունենայ։ Խոլերիկը զւարճութեան տեսակէտից ընկերութեան կարիք չունի և որով-

հետեւ նա ինքնուրոյն է, այդ պատճառով, նա աւելի առիթներ է որոնում ընկերութիւնների մէջ ընկնելու։ Այդ բանը նրան պատճառ կըլինի իր իսկական կամ կարծեցեալ առաւելութիւնները այնտեղ ցոյց տալու։ Ֆլեգմայի համար ամեն ինչ միեւնոյնն է. եթէ նա ընկաւ այդ ընկերութիւնների մէջ, գոնէ աշխատում է նրանց դուր գալ, որպէս զի իր հոգու անդորրութիւնը չըկորցնէ։

Ա. Ջիլինգարեան

ԽԱՒԱՐԻ ԵՒ ՍԱՌՈՅՑՆԵՐԻ ՄԷՋ *

Ֆրիտիօֆ Նանսէնի ճանապարհորդութիւնը դէպի հիւսիսային բեւեռ

III

Ի՞նչ էին մտածում Նանսէնի ուղեկիցները իրանց «Ֆրամի» վրայ գտնուած ժամանակը։ Մի անգամ Ամունդսէնը բացականչեց. «մի՞թէ ճշմարիտ չէ, որ մենք աշխարհիս վրայ ամենաերջանիկ մարդիկն ենք. մենք ապրում ենք այստեղ առանց մի հոգսի, ստանում ենք ամեն այն ինչ առանց մի որ և իցէ աշխատանքի և ամեն մի դժուարութիւնից խուսափում ենք առողջ և անվտանգ։ «Այո»—աւելացնում է Նանսէնը,—«շատ յարմար կեանք էր այդ, ոչ մի բան մեզ ծանրութիւն չէր պատճառում, ոչ նամակներ, ոչ թերթեր, մի՛ խօսքով՝ ոչինչ, որը կարողանար վրդովել մեր հանգստութիւնը—բոլորովին վանական կեանք, հեռու աշխարհի ունայնութիւնից։

Հասաւ Ծնունդը և ուղևորները տօնեցին ինչպէս հարկն է. այդ օրուայ ամենաուրախալի րոպէն երկու արկղների բացւելու ժամանակն էր, որի մէջ գտնւում էին Սկոտտ Հանսէնի մօր և հարսի նւիրած ընծաները ուղևորութեան անդամներին։ Տօնի պատճառով Բլեսսինգը ինքն իրան գերազանցեց և լոյս ընծայեց Framsjaa ի պատկերազարդ №-ը։

Դեկտեմբերի 31-ին Նանսէնը գրում է իր օրատետրը և անցեալ տարուն հաշիւ տալով, յոյս է տածում, որ նա զուր չանցաւ գիտութեան և այն նպատակի համար, որի համար կազմւած էր ճանապարհորդութիւնը. «Ֆրամը» թէև դանդաղ, բայց և այնպէս դէպի հիւսիս էր գնում։ Անտանելի և անախորժ էին այն ծուռ ուղիները, որ անում էր նաւը իր ճանապարհին։ «Բայց կարող էր վատ էլ լինել», աւելացնում է Նանսէնը ինքն իրան խրախուսելով։ Եւ ճշմարիտ, մի՞թէ ուղևորները ճանապարհ չըգտան Սիբիրի հիւսիսային սաստիկ անհիւրընկալ ափերի ուղղութեամբ։ Մի՞թէ ուզածներին համապատասխան «Ֆրամին» չըտիրեցի՞ն սառոյցները. մի՞թէ նա ամեն օր այդ սառոյցների հետ ունեցած մենամարտութիւնից յաղթող չէ՞ր դուրս գալիս։ Մի՞թէ «Ֆրամի» ուղեւորները նրա վրայ չէ՞ին անցկացնում մի այնպիսի կեանք, որ կարծես իրանց հարազատ Նորւեգիան թողած չըլինէին։ Յունւարի մէջ ցուրտը հասնում էր

* Տես „Աղբիւր“ № 3.

50°—բայց այդ հիւսիսի զաւակները շատ ուշադրութիւն չէին դարձնում դրա վրայ և Սկոտտ-Հանսենը չընայելով 40° ցրտին, առաւօտները դուրս է գալիս նաւի տախտակամածի վրայ միայն սպիտակեղէնով, որպէս զի որքան կարելի է շուտ կատարէ մի որ և իցէ աստղաբաշխական դիտողութիւն։ Նանսէնը կարծում էր, որ նա և նրա ընկերները կըկարողանային դիմանալ 1894 թուի յունուարի ցրտից երեսուն աստիճան աւելի ցրտին։ Եւ չիրաւի, ինչպիսի ցուրտ պէտք է, որ զգալի դառնայ այնպիսի քաջերի համար, ինչպէս նաւային խոհարար Իւլը, որը 50° ցրտին հաստանում էր։ Այսպիսի դէպքում անսովոր մարդը կըցատկէր վառարանի վրայ և կընստէր այնտեղ և իր քիթը անգամ չէր բաց թողնի վախենալով, որ չըսառի, իսկ «Ֆրամի» վրայ ընդհակառակը՝ աշխատանքը սաստիկ զբաղեցրել էր բոլորին և Բլեսսինգ բժիշկը ցոյց տուեց նոր նոր տաղանդներ, այս անգամին կազմարար դառնալով և կարգի բերելով նաւի գրադարանի փչացած գրքերը։

Միևնոյն ժամանակ չըպէտք է կարծել թէ Նանսէնը և ընկերները այնպէս հանգիստ էին ապրում, որ ոչ մի դէպք երբէք նրանց չըպատահէր։ Ընդհակառակը, պատահում էին այնպիսի դէպքեր, երբ նրանք սաստիկ վտանգի էին ենթակւում։ Սկզբում նրանք կարծում էին, թէ ձմեռը վախ չըկայ արջերից։ Այդ գազանները, մտածում էին նրանք, ձմեռային քնով ննջում են. սրա պատճառով նորւեգացիք հանգիստ զբօսնում էին սառոյցի վրայ և չէին առնում իրանց հետ ոչ մի զէնք։ Բայց հետևեալ դէպքը ցոյց տուեց, որ այդ կերպ վարւելը բաւականին վտանգաւոր բան է։

Մի անգամ, գիշերը, երբ նրանք թուղթ խաղալով նստած էին իրանց խցերում, շները վերևում հաչել սկսան. Դուրս եկան նայելու. ոչ մի կասկածաւոր բան չընկատեցին, իսկ շները շարունակում էին հաչել. պառկեցին քնելու, սակայն հաչոցը չէր դադարում։ Ինքը Նանսէնը երկար ժամանակ չէր կարողանում քնել։ Յանկարծ նա լսում է, որ տախտակամածի վրայ կարծես արկղը տեղից շարժւեց և մի ինչ որ կարծես քերւում է։ Նա ձայն տուեց կարգապահին, որպէս զի դուրս ելնէ և տեսնէ պատճառը. Նա գնաց, նայեց և կասկածաւոր բան չըգտնելով յետ դարձաւ։ Շները շարունակում էին հաչել. երեք շուն պակասում էին. Նրանք երևի պատառել էին իրանց վզի կապերը և փախել էին—այդ բանը շատ յաճախ էր պատա-

հում։ Այսպէս անցաւ ամբողջ գիշերը, հասաւ ցերեկը, որը ի հարկէ ոչնչով չէր զանազանւում գիշերից, որովհետեւ արեւը արդէն վաղուց չէր երեւում և տիրում էր բեւեռային խաւարը. Նախաճաշիկից յետոյ Պետեր Հենդրիկսէնը Մոգստադի հետ առան մի մի լապտեր սառոյցի վրայ կորած երեք շների հետքերը գտնելու համար։ Նրանց ետեւից կանչեցին, որպէս զի հրացան առնեն, սակայն սրանք պատասխանեցին, թէ հրացան պէտք չէ։ «Երբ մենք լապտերներով դուրս եկանք»—պատմում է յետոյ Պետերը Նանսէնին—«սառոյցի վրայ նկատեցինք արեան կաթիլներ, իսկ մի քիչ հեռու արջի հետքեր. մենք գնացինք նրանց ուղղութեամբ, իսկ ամբողջ շների խումբը վազեց յառաջ։ Շատ քիչ էինք մենք հեռացել նաւից, երբ շները սաստիկ հաչոց բարձրացրին, այլ եւս մի րոպէ—և մեր վրայ յարձակւեց ահագին սպիտակ արջը, շրջապատւած շների խմբով։ Նրան տեսնելով մենք ոյժերիս չափ սկսեցինք վազել դէպի նաւը։ Մոգստադը հագած ունէր լապլանդական թեթեւ ոտնամաններ և դրա համար ինձանից շուտ հասաւ նաւը, իսկ ես հագել էի փայտէ ծանր ոտնամաններ և բացի դրանից անզգուշութեամբ հանդիպեցի սառցային կոյտի և սահելով վայր ընկայ։ Ես իսկոյն բարձրացայ, լապտերով լուսաւորեցի ետեւս, որպէս զի տեսնեմ, հետեւո՞ւմ է արդեօք արջը, բայց ոչինչ չընկատեցի։ Յետոյ նորից սկսեցի վազել։ Յանկարծ իմ աջ կողմը տեսայ մի սեւ բան. սկզբում ես կարծեցի, թէ շուն է այդ։ Բայց դեռ չըկարողացայ ինչպէս հարկն է նայել, երբ իմ վրայ յարձակւեց արջը և խածեց կողքս։ Ես կարծեցի թէ հասել է իմ վերջը։ Ի՞նչ անէի։ Ես հետս մինչեւ անգամ զմելի չունէի։ Այն ժամանակ ես վեր բարձրացրի լապտերը և այնպէս զարկեցի նրանով արջի գլխին, որ լապտերը ջախջախւելով սառոյցի վրայ փշրւեց (պէտք է նկատել, որ Պետերը յիրաւի նշանաւոր էր իր հերակլէսական ոյժով)։ Հարւածը զգալով արջը նստեց և նայեց իմ վրայ։ Ես իսկոյն սկսեցի վազել. երբ նա բարձրացաւ, նրան մօտեցան շները և նա յարձակւեց նրանց վրայ»։ Այս ամենը կատարւեց այնպէս արագ, որ Պետերից առաջ փախչող Մոգըստադը մինչեւ անգամ ժամանակ չունեցաւ նաւի վրայ վտանգը յայտնելու։ Լսելով Պետերի կանչելը՝ նա ներս վազեց խուցը, առաւ հրացանը և նորից բարձրացաւ: Այստեղ նա տեսաւ հետեւեալ պատկերը։ Արջը յափշտակեց շանը, իսկ բոլոր շները յարձակւեցին նրա վրայ և ելան նրա շալակը։ Նա նրանց թօթափեց իր

վրայից և յարձակւեց ուրիշ շան վրայ. բոլոր շները նորից նրա վրայ և այլն։ Այս խաղը շարունակւեց այնքան, մինչև որ նրանք մօտեցան նաւին։ Այստեղ Մոգստադը արձակեց հրացանը, բայց չըդիպաւ արջին։ Պետերը արիւնաշաղաղ կողքով արդէն նաւի վրայ էր գտնւում և կանչում էր «հրացան, հրացան»։ Զորս հոգի դուրս վազեցին տախտակամածի վրայ. արջը նաւի մօտ շանն էր պատառում. «Ես դուրս քաշեցի իմ հրացանի բերնից փականքը»—գրում է Նանսէնը,—«սակայն զուր. Պետերը կանչում էր. «հրացան արձակեցէք, իմը չի ուզում խփել»․ Նա վատ սովորութիւն ունէր, այնպէս սաստիկ եղում էր հրացանը վազելինով, որ զսպանակը դադարում էր գործելուց. Իմ մօտը կանգնած էր Եակոբսոնը և նոյնպէս զուր էր աշխատում դուրս բերել իր հրացանի փականքը. Մոգստադը արձակել էր բոլոր գնդակները և դատարկ հրացանը օդի մէջ շարժելով կանչում էր, որ սպանեն արջին։ Զորս հոգի—և ոչ մինը չէր կարողանում սպանել, թէև մենք կարող էինք հրացանի ծայրով հարւածել արջի կռնակը։ Վերջապէս երևաց Իոհանսէնը և սպանեց արջին. Երբ գործը քննւեց, դուրս եկաւ, որ արջը պատառել էր երկու շուն. Գիշերը նա սանդուղքի վրայով բարձրացել էր տախտակամածի վրայ (այդ այն ձայնն էր, որ լսել էր Նանսէնը), մի կողմ հրելով ճանապարհի վրայ գտնւած արկղը, նա յափշտակել էր ամենամօտ գտնւող շանը և հեռացել էր. իր քաղցը մի-քիչ յագեցնելով՝ նա բարձրացել և յափշտակել էր երկրորդ շանը և այդ կերպ շարունակած կըլինէր դեռ երկար, եթէ նրան թոյլ տային. Որոշւած էր այդ տեսակ այցելութիւններից խուսափելու համար շինել արջի թակարդ.

Այսպիսով ընթերցողը տեսաւ, թէ ինչ կերպ անցկացրին «Ֆրամի» վրայ 1893—1894 թ. ձմեռը. Նա հարուստ չէ արկածներով և դրամատիկական էպիզոդներով. Ջիւսիսափայլերի նկարչական պատկերները, սպիտակ արջերի յարձակման պատմութիւնը, բանաստեղծական նկարագրութիւնները Նանսէնի հոգեկան անհանգստութեանց, որոնք անցնում էին յոյսից դէպի կասկածանքը, կասկածանքից դէպի յոյսը, կախւած լինելով քամիի ուղղութիւնից, «Ֆրամի» վրայի լուկուլլական ճաշերի կատակերգական նկարագրութիւնները—ահա Նանսէնի օրագրի կարճ բովանդակութիւնը. Բևեռային գիշերների մասին ոչ մի սովորական բան չըկայ այնտեղ, որը մենք տեսնում ենք այլ բևեռային ուղևո-

բութեանց նկարագրութիւնների մէջ։ Տեսնում ես առաջդ կուշտ, բաւական առողջ և ուրախ մարդիկ, Աստուած գիտէ, ինչու համար հեռացած Սառուցեալ ծովի անյայտ խորքերը, կարծես թէ նրանք տանը չէին կարող անել նոյնը, ինչ որ անում են այստեղ, այն է՝ ուտել, խմել, քնել, վազել սառոյցի վրայ, որսալ, կարդալ հետաքրքիր գրքեր և եթէ ցանկալի է՝ մետեօրախօսական դիտողութիւններ անել։ Ընթերցողի համար ամբողջ ուղևորութիւնը ներկայանում է ինչպէս մի զւարճալի զբօսանք, և նա անհամբեր սպասում է Նանսէնի և Իօհանսէնի ճանապարհորդութեան պատմութեանը սայլերի և նաւակների վրայ, յուսալով միայն այնտեղ, այդ իր համարձակութեամբ և քաջութեամբ անօրինակելի ձեռնարկութեան մէջ գտնել հռչակւած նորւեգացու քաջագործութիւնների պատմութիւնը։

Այժմ դառնանք այն հարցին, թէ ինչ նշանակութիւն ունեցաւ գիտութեան համար այդ ձմեռելը։

Դրա մասին երկար չըխօսելու համար միայն այս կասենք, որ Նանսէնի ուղևորութիւնը կազմւած էր ոչ թէ բևեռին հասնելու համար, այլ հիւսիսային բևեռային երկրների հետազօտման համար. Աշխարհիս առանցքի ծայրին հասնելը միևնոյն նշանակութիւնը ունի, ինչ որ աշխարհիս բևեռային մի որ և է անյայտ տեղին հասնելը. ուստի բևեռային ուղևորութիւնների նպատակն է առհասարակ բևեռային շրջանակի մէջ գտնւող անյայտ տեղերին հասնելը և այդ ցամաքի և ծովի աշխարհագրական կազմակերպութեան որոշելը. Այս բոլորը անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ այն դէպքում, եթէ մենք ուզում ենք գնահատել առհասարակ բոլոր բևեռային ուղևորութիւնները։

Վերջ երրորդ գլխի

Սիմ. Ա. Պապիեանց

Ժամանակաւոր-խմբագիր՝ Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր բացի կիրակի օրերից։

Առաւօտները

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. *վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) եւ միզասեռ. հ.*
Կ. Մ. Չիկովանի—9—10 ժ. *աչքի, ներքին եւ նեարդային հ.*
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. *կանանց եւ երեխայոց հ.*
Ի. Փ. Պրոտասեւիչ—12—1 ժ. *ականջի, կոկորդի, քթի եւ կրծքի հ.*
Ս. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. *ներքին եւ երեխայոց հ.*

Երեկոները

Ի. Փ. Պրոտասեւիչ—6—7 ժ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50. կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Սուանիտսկի—*ժանը ծաղկախտութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ զինել* 11—1 ժ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Նաւասարդեան

Լոյս տեսաւ

Ե. Շահազիզի

ՄԿՐՏԻՉ ՅՈՎՍԻՓԵԱՆ ԷՄԻՆ

գիրքը

վաճառւում է 60 կ. Կենդրոնական գրավաճառանոցում և հեղինակի մօտ, Նոր-Նախիջևանում։ Հասցէն հեղինակի. Нахичевань н/Д, Ервянду Шахъ-Азизъ. 5—5

Պատուաւոր ընտանիք ԲԵՐԼԻՆՈՒՄ ընդունում է ճանապարհորդ—հիւրեր։ Ձաքաթը 35 մարկից (17 ր.) սկսած (սենեակ, առաւօտ երեկոյ չայ, սուրճ, ճաշ եւ ընթրիք)

PENSION

Frau Leut. J. Hoeltzl-Sheridan
Խօսում են ֆրանսերէն և անգլիերէն
BERLIN W. Potsdamer Str. 31 II.
10—10 Fahrstuhl.

Պարիզում, Լուքսեմբուրգի այգու հանդէպ ընտանիքի մէջ կահաւորուած սենեակ, ճաշ և ամեն յարմարութիւն։

Hotel de l'observatoire

pension de famille
En face le jardin du Luxemburg
107, Boulevard Saint-Michel, 107
PARIS

Table d'hote a midi et a 7 heures
CUISINE BOURGEOISE
Lumière électrique dans toutes les chambres
Prix Modérés. Փ. 0—12

Պարիզի կենդրոնում Մադլեն եկեղեցու մօտ՝ համեստ, բայց մաքուր կահաւորուած սենեակներ

Hotel Peiffer

et
MAISON MEUBLÉE
6, Passage de la Madeleine, 6
PARIS

Déjeuners-diners-table d'hote
La Maison prend des Pensionnaires
Chambres depuis 3 fr. à 6 f.
Փ. 0—11

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

Ներկայ 1900 թ. խմբագրութիւնը շարունակւում է

Տարեկան գինը 3 ր., արտասահման՝ 4 ր.

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Редакція жур. „АГБЮРЪ".



ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԱՂԷՏԸ

Պատշաճ բացատրութիւններով պատկերներ երկրաշարժից վնասուած գիւղերի.

Գինն է **25** կոպ.

Դիմել՝ Тифлисъ, ред. „Таразъ".

ԲԺՇԿԱՊ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

վերադառնալով արտասահմանից, վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը, առ. 9—11 ժամը, երեկ. 5—7-ը. Սերգիեւսկայա փող. 12, տ. Ծովեանեանի. 5—1

ԱՏՐՊԵՏԻ

«Այմաստ» վէպ բարձր-հայոց կեանքից. գինն է . . . . 2 ր.

«Խեւ-Կարապետ» վէպ հայ կաթոլիկների կեանքից . . . . 1 ր.

«Քոռ Եղիկ» վէպ շիրակ. կեանքից. . . . . 30 կ.

Զխնոց վէպ Սազի գիւղացիների (թրքահայերի) իրական կեանքից . . . . 30 կ.

Ժառանգներ Քղի գաւառի (թըրքահայերի, կեանքից. . 30 կ.

«Զուզան» ողբերգ. օպերայի համար թիւրքահայոց կեանքից . 1 ր.

«Սարրաֆ» ողբերգութիւն տաճկ. պատ. կեանքից . . . 30 կ.

Ներսայի Նռաֆելը թրքահայերի կեանքից . . . . 30 կ.

Դիմել Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցին եւ Կովկասի քաղաքների հայ գրավաճառներին։

Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս. Въ Нахичевань н-Д, въ Типографію Бр. Аваковыхъ, **որոնց կունեն սովորական զիջումն։**

25—25

Ընտանիքներով Պարիզ եկողներին առաջարկւում է կահաւորուած սենեակներ, ճաշ, նախաճաշ։

HOTEL LARTISIEN

(près la Madeleine)

English Spoken — V. ROZÉ — Table d'hote déjeuner a la carte

Propriétaire

4, Passage de la Madeleine, 4.

PARIS

Դ. 0—11